**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25-1**

ք. Գյումրի

«30» հունվարի 2026թ.

Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ն, ի դեմս աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կարեն Մալխասյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լոկատոր» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Թիվ 3 խաչմերուկների լուսացուցային օբյեկտների տեղադրման շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 90 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել

Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 5 օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյթյունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնոթյունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 90 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի ( էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանն այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու

փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ

տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **23 861 784** (քսաներեք միլիոն ութ հարյուր վաթսունմեկ հազար յոթ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ, որից 3 976 964 (երեք միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար ինը հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը | նախահաշվային գնի 0,05 % չափով |
| 2 | Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը | նախահաշվային գնի 0,1 % չափով |
| 3 | Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը | նախահաշվային գնի 0,1 % չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև

պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի

Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1
ՀՀ ՖՆԳՎ
Հ/Հ 900212351630
ՀՎՀՀ 05511159

Վ.Ղուկասյան
---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Լոկատոր» ՓԲԸ
Ք. Երևան, Կոմիտասի 36 ա, 22
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 2474703386220000
ՀՎՀՀ 00095651

Ա.Խաչատրյան
---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված թիվ 1
«30» հունվարի 2026 թ. կնքված
ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25-1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## «ԹՎՈՎ 3 ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐԻ ԼՈՒՍԱՑՈՒՑԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Ծավալաթերթ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Հիմնավորում | Աշխատանքների և ծախսերի անվանումը | չ/մ | քանակ | Միավորի գինը. Հազար դրամ | Ընդհանուր /հազար դրամ/ |
| | | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | E1-961 | 3-րդ խմբի գրունտի ձեռքով մշակում | մ³ | 2.60 | 4.875 | 12.675 |
| 2. | E1-968 | Հետլիցք ձեռքով | մ³ | 1.30 | 1.937 | 2.518 |
| 3. | E1-1184 | Հողի տոփանում | մ³ | 1.30 | 0.442 | 0.574 |
| 4. | E23-229 ԲԿՏՄ | Քանդված շինարարական աղբի ձեռքով բարձում ավտոինքնաթափի վրա | տն | 2.34 | 1.521 | 3.559 |
| 5. | 1 տկմ = 100 դր | Տեղափոխություն մինչև 13 կմ | տն | 2.34 | 5.655 | 13.232 |
| 6 | E6-1 | Հենասյուների բետոնե նախաշերտի իրականացում, բետոն B7,5 | մ³ | 0.16 | 54.457 | 8.713 |
| 7. | E6-5 | Հենասյուների ե/բետոնե հիմքերի իրականացում, բետոն B15 | մ³ | 1.30 | 83.642 | 108.734 |
| 8. | C124-1-8 | Ամրան A-1 դասի Ф 8մմ | տոն | 0.024 | 545.311 | 13.087 |
| 9. | E9-200 կիրարկ | Հենասյուն կլոր, ներկված, լուսազդանշանային սարքերի համար, 6մ բարձրության կոնսոլային /3,5մ/ | տոն | 0.244 | 2235.05 | 545.352 |
| 10. | E8-228-1 | СИП 3x2,5 մմ² մալուխի անցկացում օդով | գծմ | 50 | 0.531 | 26.55 |
| 11. | Շուկա | Լուսացույց տրանսպորտային միակողմանի | հատ | 2 | 173.472 | 346.944 |
| 12. | Շուկա | Լուսացույց հետիոտնային | հատ | 2 | 140.946 | 281.892 |
| 13. | Շուկա | Լուսացույցների ղեկավարման հսկիչի տեղադրում | հատ | 1 | 390.312 | 390.312 |
| 14. | E8-228-1 | СИП 7x0,75 մմ² մալուխի անցկացում օդով | գծմ | 40 | 0.563 | 22.52 |
| 15. | E8-228-1 | СИП 14x0,75 մմ² մալուխի անցկացում օդով | գծմ | 90 | 0.986 | 88.74 |
| | | **Ընդամենը** | | | | **1865.402** |
| | | **ԱԱՀ 20%** | | | | **373.08** |
| | | **Ընդհանուրը 1 հատի համար** | | | | **2238.482** |
| | | **Ընդհանուրը 12 լրակազմի (3 խաչմերուկների) համար:** | | | | **26861.784** |

*Հավելված թիվ 1.1*

## Տեխնիկական բնութագիր*
## Լուսացույցների և հարակից պարագաների մատակարարման և տեղադրման

Կատարողը պետք է մատակարարի և իր հաշվին տեղադրի թվով 3 խաչմերուկնուրի լուսացույցային օբյեկտներ, համաձայն տեխնիկական առաջադրանքում նշված պարամետրերի, պայմանների և քանակների:

**Տրանսպորտային լուսացույց**

- Ազդանշանի ժամանակի հետ հաշվարկի ցուցիչ, որը պետք է աշխատի հետևյալ ռեժիմներով.

ա) հետհաշվարկի տևողությունը որոշել ազդանշանի նախորդ տևողության հիման վրա,

բ) հետհաշվարկի տևողությունը սահմանել համաձայն խաչմերուկի կառավարման վահանակից ստացված տվյալի:

- Տեխնիկական ցուցանիշները համապատասխան ГОСТР52289-2004, ГОСТ Р52282-2004, Ф–300, փոշու և խոնավության անվտանգությունը IP54, ГОСТ 14254-96
- Չափսերը՝ ոչ ավել 1180*400*100 մմ,
- Ապերտուրայի լուսային տրամագիծը՝ 300մմ,
- Լարումը՝ 175-245 Վ,
- Լույսի ուժը՝

ա) հաստատուն 500 ԿԴ և ավելի

բ) ադապտիվ՝ կախված շրջակա միջավայրի լուսավորվածությունից:

- Տեսանելիությունը՝ ոչ պակաս 100 մետրից
- Շահագործման պայմանները -40°C- +60°C, 98% հարաբերական խոնավության պայմաններում
- Աշխատանքի պայմանները՝ ուղղահայաց և հորիզոնական
- Կմախքը՝ սև, փոշեներկած կամ ներկանյութով ներկած, որը պետք է իրականացնի ժանգի փոխակերպիչի, հիմքի և վերջնական դեկորատիվ ծածկույթի դեր: Այն պետք է լինի կորոզիայի նկատմամբ կայուն և դիմացկուն եղանակային տարբեր պայմանների (Օրինակ՝ Эмаль с металл, Стружкой Miofe 771, антрацит, Ролакс Rolax.):
- Լուսացույցները պետք է կահավորված լինեն հովարներով (козырек) երկարությունը առնվազն 20 սմ:
-Լուսացույցերը պետք է համալրված լինեն ամրացման դետալներով, որոնք պետք է հնարավորություն տան լուսացույցը ամրացնելու արտաքին լուսավորության, հատուկ հենասյան և ճոպանի վրա և ապահովեն լուսացույցի մինչև 180° պտույտը և ֆիքսումը առանցքի շուրջ:

**Հետիոտնային լուսացույց**

- Ազդանշանի ժամանակի հետ հաշվարկի ցուցիչ, որը պետք է աշխատի հետևյալ ռեժիմներով

ա) հետհաշվարկի տևողությունը որոշել ազդանշանի նախորդ տևողության հիման վրա

բ)հետհաշվարկի տևողությունը սահմանել համաձայն խաչմերուկի կառավարման վահանակից ստացված տվյալի

- Տեխնիկական ցուցանիշները համապատասխան ГОСТР52289-2004, ГОСТ Р52282-2004, Ф–200 փոշու և խոնավության անվտանգությունը IP54 ГОСТ 14254-96
- Չափսերը՝ ոչ ավել 780*400*100 մմ
-Ապերտուրայի տրամագիծը՝ 300 մմ
- Լարումը՝ 175-245 Վ
- Լույսի ուժը՝ հաստատուն 500 ԿԴ և ավելի
- Տեսանելիությունը՝ ոչ պակաս 100 մետրից
- Կույրերի համար ձայնային ազդանշանի առկայություն
- Շահագործման պայմանները -40°C- +60°C, 98% հարաբերական խոնավության պայմաններում
- Աշխատանքի պայմանները՝ ուղղահայաց
- Կմախքը՝ սև, փոշեներկած կամ ներկանյութով ներկած, որը պետք է իրականացնի ժանգի փոխակերպիչի, հիմքի և վերջնական դեկորատիվ ծածկույթի դեր: Այն պետք է լինի կորոզիայի նկատմամբ կայուն և դիմացկուն եղանակային տարբեր պայմանների (Օրինակ՝ Эмаль с металл, Стружкой Miofe 771, антрацит, Ролакс Rolax.):
- Լուսացույցները պետք է կահավորված լինեն հովարներով (козырек) երկարությունը առնվազն 20 սմ:

Լուսացույցը պետք է համալրված լինի ամրացման դետալներով, որոնք պետք է հնարավորություն տան լուսացույցը ամրացնելու կանգնակի վրա և ապահովեն լուսացույցի մինչև 180° պտույտը և ֆիքսումը առանցքի շուրջ:

Ապրանքը պետք է մատակարարվի համաձայն ՀՀ կառավարության 26/10/2006թ. "Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին" N 1699-Ն որոշման ինչպես նաև ԳՕՍՏ 52289-2004 և ԳՕՍՏ 52290-2004 պահանջներին համապատասխան:

***Հեռակառավարվող կարգավորիչ***

1. Փոփոխական հոսանքի ցանցից սնուցման հնարավորություն /200Վ +33/-22 և 50+/-1 հաճախություն/
2. Հիմնական և միջանկյալ տակտերի տևողության փոփոխության ինտերվալներ առնվազն 1-150 վայրկյան
3. Կառավարման անկախ ուղիների քանակ մինչև 32 ըստ պատվիրատուի պահանջի
4. 4G կապի հնարավորություն
5. Կառավարման ռեժիմներ՝ Լոկալ /ավտոնոմ/
6. Ժամանակային կարգավորումների ընդհատությունը 1 վայրկյան
7. Կառավարման ծրագրերի քանակը՝ անսահմանափակ

8.Ելքային շղթային բեռնվածքի առավելագույն հոսանքը՝ 3Ա

9.Ելքային շղթայի գումարային բեռնվածության հոսանքը՝ 20Ա

10.Կարգավորիչի սպառվող հզորությունը՝ոչավել 5վատտ

12. Աշխատանքային ջերմաստիճանի միջակայք՝ - 45°C - +80°C
13. Կարգավորիչի բլոկի պաշտպանվածության աստիճան՝ IP54
14. Սարքի ժամացույցի սինքրոնիզացում սերբերի հետ իրական ժամանակում
15. Ադապտիվ կառավարում, որը ներառում է՝ արտաքին սարքերից ստացվող տվյալների հիման վրա ավտոմատ ռեժիմով ֆազաների փոփոխություն խաչմերուկի բեռնաթափման համար
16.Ունենա հնարավորություն միանալու պատվիրատուի սեռվեռում գործող հեռակառավարման համակարգին

***Հեռակառավարման համակարգ***

- Լուսացույցերի ղեկավարման մոդուլների գրանցում (առանց քանակի սահմանափակման)
- Լուսացուցային տեսակները
– Տրանսպորտային, հետիոտն, սլաք
- Լուսացույցերի աշխատանքի ռեժիմների առցանց սահմանում (առանց քանակի սահմանափակման)
- Կառավարման ռեժիմների տեսակներ– լոկալ (ավտոնոմ)
- Տարբեր խաչմերուկների լուսացույցների լոգիկական փոխկապակցում (երթևեկության ներդաշնակ կառավարում)
- Կառավարման ալգորիթմներ
- Ժամանակային ժապավեն, ֆիքսված ֆազաներ (այդ թվում համաձայնեցված)
- Ֆազաների առավելագույն քանակ՝ անսահմանափակ
- Ցիկլում ֆազաների առավելագույն քանակ՝ անսահմանափակ
- Ազդանշանային նախագծերի առավելագույն քանակ՝ անսահմանափակ
- Օրացույցի պարամետրեր – օրվա պլան, շաբաթվա պլան, սեզոնի պլան, տարվա հատուկ օրեր
- Օրացույցում գրառումների առավելագույն քանակ՝ անսահմանափակ
- Լուսացույցների աշխատանքի մոնիթորինգ (քարտեզային և գրաֆիկական տեսք)
- Քարտեզի վրա առցանց ռեժիմում լուսացույցների ընթացիկ կարգավիճակի(ֆազաների) ցուցադրում, մասնավորապես՝ տվյալ պահին որ լուսացույցի վրա որ լույսն է վառվում
- Եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) ինտերֆեյս

Մատակարարը պետք է ինքնուրույն պատվիրատուի անունից ստանա նաև տեխնիկական պայման էլեկտրասնուցման համար

***Հենասյուներ (Կանգնակով կոնսոլ)***

–Կոնսոլը պետք է պատրաստված լինի և տեղադրվի ըստ տեղանքի, ներկայացված սխեմայի կամ նախագծի, նոր, չօգտագործված մեկ ամբողջական երկաթյա խողովակից, փոշեներկված կամ ներկանյութով ներկված, որը պետք է իրականացնի ժանգի փոխակերպիչի, հիմքի և վերջնական

դեկորատիվ ծածկույթի դեր: Այն պետք է հնարավոր լինի կիրառել կոշտ ժանգի, նախկինում ալկիդ-ուրետոնային ներկով ծածկված մակերեսների վրա, լինել կոռոզիայի նկատմամբ կայուն և դիմացկուն եղանակային տարբեր պայմանների (Օրինակ՝ Эмаль с металл, Стружкой Miofe 771, антрацит, Ролакс Rolax.): Գույնը պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ: Տեղադրումը՝ Բ-15 դասի բետոնով:

* Կապալառուն աշխատանքները կատարում է քաղաք Գյումրիում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի «Գյումրու համայնքապետարանի
աշխատակազմ» ՀԿՀ
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1
ՀՀ ՖՆԳՎ
Հ/Հ 900212351630
ՀՎՀՀ 05511159

Կ.Մալխասյան
-------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Լոկատոր» ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 2474703386220000
ՀՎՀՀ 00095651

Ա.Խաչատրյան
-------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 30 » հունվար 2026թ. կնքված
ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25-1 ծածկագրով պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## «ԹՎՈՎ 3 ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐԻ ԼՈՒՍԱՑՈՒՑԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | **ԹՎՈՎ 3 ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐԻ ԼՈՒՍԱՑՈՒՑԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ** | Պայմանագիրը (Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագիրը) ուժի մեջ է մտնելու օրվանից 20 օրացուցային օր: | 90 օրացուցային օր |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1
ՀՀ ՖՆԳՎ
Հ/Հ 900212351630
ՀՎՀՀ 05511159

Կ.Մալխասյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Լոկատոր» ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 2474703386220000
ՀՎՀՀ 00095651

Ա.Խաչատրյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*«30» հունվարի 2026թ. կնքված*
***ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25-1** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավեր-ով նախա-տեսված չափա-բաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը |
| 1 | 45311142/504 | Թիվ 3 խաչմերուկ-ների լուսացու-ցային օբյեկտների տեղադրման շինարարական աշխատանքներ | Սույն պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: | | | | | | | | | | | | **23 861 784** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1
ՀՀ ՖՆԳՎ
Հ/Հ 900212351630
ՀՎՀՀ 05511159

Կ.Մալխասյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Լոկատոր» ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 2474703386220000
ՀՎՀՀ 00095651

Ա.Խաչատրյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 30 » հունվար 2026 թ. կնքված
**ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25-1** ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ____________

հհ ______________________

հվհհ ____________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ____________

հհ______________________

հվհհ____________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 4.1*
*« 30 » հունվարի 2026 թ. կնքված*
**ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25-1** *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ________________________<br>ազգանուն, անուն | ________________________<br>ազգանուն, անուն |
| ________________________<br>ստորագրություն | ________________________<br>ստորագրություն |

*Հավելված N 5*
*« 30 » հունվարի 2026 թ. կնքված*
***ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25-1*** *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _______________________-ի և _____________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կապալառուի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և _________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կապալառուի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_______________________________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25-1 ծածկագրով 2026 թվականի հունվարի 30 -ին կնքված պայմանագրի

ք.Գյումրի

«30 » հունվարի 2026թ.

«Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ»-ն ի դեմս աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կարեն Մալխասյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետև «Պատվիրատու»), մի կողմից, և «Լոկատոր» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Արման Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «ԿԱՊԱԼԱՌՈՒ»), մյուս կողմից, այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 30 հունվարի 2026թ. կնքված ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25-1 ծածկագրով գնման պայմանագրի 8.1 և 8.16 կետի դրույթները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Հետագա համագործակցության համար կողմերը որոշեցին «30 » հունվարի 2026թ. հաստատել լրացուցիչ վճարման ժամանակացույց ըստ հավելված N2-ի, որի միջոցով հատկացվում են համապատասխան ֆինանսական միջոցներ վճարման ժամանակացույցով նշվող ծառայությունների և դրանց քանակների ձեռք բերման համար:
2. Սույն համաձայնագիրը համարվում է ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերեն, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
4. Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
5. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

## ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1
ՀՀ ՖՆԳՎ
Հ/Հ 900212351630
ՀՎՀՀ 05511159

Կ.Մալխասյան
---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Լոկատոր» ՓԲԸ
Ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 2474703386220000
ՀՎՀՀ 00095651

Ա.Խաչատրյան
---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«30» հունվարի 2026թ. կնքված
ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-99/25-1_ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45311142/504 | Թվով 3 խաչմերուկների լուսացուցային օբյեկտների տեղադրման շինարարական աշխատանքներ | **23 861 784** | | | **23 861 784** | | | **23 861 784** | | | **23 861 784** | | | **23 861 784** |

Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանականներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 15-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում **փաստացի կատարված աշխատանքների 100%-ի չափով**՝ Վաճառողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
«Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ»
ՀԿՀ
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1
ՀՀ ՖՆԳՎ
Հ/Հ 900212351630
ՀՎՀՀ 05511159

Կ.Մանուկյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Լոկատոր» ՓԲԸ
Ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 2474703386220000
ՀՎՀՀ 00095651

Ա.Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ